

կարգի վանահայր վանացն Սաղեանի Տ. Թովմա վարդապետ Բողղասարեան. թ. 615:

— Յանուն Տ. Գրիգոր Տ. վարդապետի որով կարգի նա վանահայր ս. Թովմա Առաքելոյ վանացն Ազուլիաց. թ. 632:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.


20 ապրիլի. Երևանի Պ. Նահանգապետը թ. 3064 և 997 գրութիւններով յայտնում է Սինօզին, որ Զանջրուայ ս. Կարապետի վանքը ֆէասուած լինելով երկրաշարժից կործանման վանդ է սպառնում, և խնդրում է Սինօզի անօրէնութիւնը: Սինօզը վճռեց զօրծակալների և զաւսուսպետների միջոցով յայտնել ժողովրդին, որ մինչև վանքի նորոգութիւնը ուխտազնացութիւնն արգելուած է:

4 մայիսի. Կարուց Հոգևոր կառավարութիւնը թ. 24 և 416 գրութիւններով յայտնում է Սինօզին, որ «Տայլար» Աթոռապատկան հոգի կապալառուն պայմանը խախտել է: Սինօզը վճռեց պատուիրել Կարուց Հոգևոր կառավարութեան նախ յիշեալ կապալառուին հեռացնելով նոր ածուրդ նշանակել ու պայմանը ներկայացնել Սինօզին ի հաստատութիւն. երկրորդ՝ դատաստանական կարգաւ կապալառուից 1500 ռ. տուգանք ստանալ:

15 մայիսի. Սինօզը լսելով Վրաստանի և Իմերէթի թեմի Կոնսիստորիայի թ. 1928 յայտարարութիւնը, վճռեց ծանուցանել Ռուսաստանի Հայոց հոգևոր բոլոր ատեաններին, որ հայ քահանաները քսա խնդրոյ միւս ոչ օրթոդոքս քրիստոնեաների (կաթողիկոսների, բողոքականների, ասորիների և հարեշնների) կարող են կատարել նոցա հոգևոր պէտքերը:

Ռուսաստանի սովետներին օգնող մասնաժողովը ապրիլի 22-ի գրութեամբ խնդրում է Սինօզից օժանդակել իրեն զրամական նրպասաներ ժողովելու գործում և ցոյց տալ թէ որտեղի հայ ժողովուրդը օգնութեան կարիք ունի: Սինօզը վճռեց պատուիրել Ռուսաստանի Հայոց Կոնսիստորիաներին, որ հրաւեր կարգան հայ ժողովրդեան օգնելու անբերրութիւնից ֆէասուած Ռուսաստանի ազգաբնա-

կութեանը և հանգանակած զուժարները ուղարկեն նշանակեալ հասցէին՝ նոցա քանակութեան մասին տեղեկութիւն տալով Սինօզին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

«Դու ես վե՛ս, եւ ի վերայ այդ վե՛սի շինեցից զեկեղեցի ի՛ն՝ եւ դրամք դո՛ւրսց զնա մի յարսանահացն»:

Մատթ. ԹԶ. 18.



ՍԿԱՅԱԿԱՆ ոսկէ տառերով Հռոմի ս. Պետրոս եկեղեցւոյ՝ քրիստոնէական ամենահոյակապ տաճարի, գմբէթի մէջ արձանագրուած՝ Հռոմէական եկեղեցւոյ նուիրապետական ձգտումների հիմք են կազմում այս խօսքերը. բայց նոքա կարող էին արձանագրուած լինել նաև քրիստոնէական բոլոր տաճարների և ամենափոքր մատուռի գմբէթի մէջ, և իւրաքանչիւր եկեղեցւոյ կենդանութեան սկզբունք և գործունէութեան նշանաբան համարուիլ: Այդ հասկանալու համար պէտք է պարզել նախ թէ ինչ կապակցութեան մէջ են ասուած նոքա աւետարանում և ինչ է նոցա բառացի իմաստը:

Փրկչի երկրաւոր կենաց ամենակարևոր ընդհանրեց մէկն էր, երբ այդ հանդիսաւոր խօսքերն արտասանուեցան. Անցել էին Գալիլիայի այն գեղեցիկ օրերը, երբ Նորա քարոզութիւնների թարմ տպաւորութեան ներքոյ՝ ոգևորուած ամբողջ հեռուում և շրջապատում էր Նորան ամեն տեղ. այդ ամբոխի առաջնորդների հետ մի քանի թեթև վիճարանութիւններ ունենալուց յետոյ՝ Նա այս անգամ արդէն վճռական կերպով մերժել էր նոցա իրենից և սկիզբը դրել այն թշնամական յարաբերութիւնների որոնց հետևանքը իւր անարգական մահը պէտք է լինէր խաչի վրայ: Նա զիտէր այդ, և մենակ կանգնած

մեր երկրագունդի վերայ, ուր բոլորը օտար էին Նորա համար՝ օտար ոգւով և ձգտումներով, մի մխիթարական կէտ էր որոնում իւր շուրջ, որի վերայ աչքը կանգ առնել և յուսալից ապագայի նշոյլներ տեսնել կարող էր— Հրէաները նշան էին ուզում. Նորա Մեւիա լինելուն հոււատարու համար Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը պահանջում էր, որ Նա մի նշան ցոյց տայ երկնքից և ապացուցանէ այգւսիսով թէ կապեր ունի երկնքում իշխող Աստուծոյ հետ կարող է երկնքի զօրութիւնները գործ դնել և այդ ժողովուրդի երկրաւոր իղձերին բաւականութիւն տալ: Իսկ Աստուծոյ խորհուրդները բոլորովին տարբեր էին. տարբեր զօրութեամբ և տարբեր նպատակով էր յայտնուել Աստուծոյ ուղարկած Մեսիան, և որպէս զի Նորա առաքելութեան նպատակն իրագործուէր, հարկաւոր էր որ մարդիկ Նորա մէջ թաղնուած ներքին զօրութիւնը ճանաչէին՝ ճանաչէին առանց արտաքին նշանների և հակառակ իսկ արտաքին նշանների:

Փորձը ցոյց էր տուել, որ Հրէից նախապաշարուած ժողովուրդն անընդունակ էր այդպիսի ճանաչողութեան. կամ մի ակընյայտնի նշան ցոյց տուր, որ Դու Աստուծոյ կողմից ես ուղարկուած, կամ թէ չէ. Ըս բոլոր գեղեցիկ, երկնային իմաստութեամբ լի խօսքերն ու հրաշալի բարեգործութիւնները մենք առ ոչինչ կհամարենք և Ընդ կպատժենք իբրև խաբերայի՝ այդ էր անխուսափելի վճիռը. և ահա իբրև հալածական ելնում է Նա առաջին անգամ հայրենի երկրից, օտար հողի վերայ առանձնութեան մէջ պատրաստուելու մեծ պայքարի համար, և հարցնում է Ինքն իրեն, հարցնում է իրեն դեռ հաւատարիմ մնացած աշակերտների փոքրիկ խմբին. «Ձո՞ք որ ասեն զինէն մարդիկն» — «Ձո՞ք սակք Դուք»: Արդե՞ք գոնէ մի հողի կայ արդե՞ք Դուք, որ շարունակ ինձ հետ էիք, ամէնից աւելի էք լսել իմ խօսքերը և տեսել իմ գործքերը՝ Դո՞ք գոնէ զիտէք իմ ով լինելս և պատրաստ էք պահպանել այդ ճանաչողութիւնը, և թէ ամբողջ աշխարհն իսկ բոլոր արտաքին երևոյթները դէմ լինին դորան, պատրաստ էք իբրև Աստուծոյ Որդի

ընդունել այս իմ խոնարհ և անփառունակ վիճակի մէջ՝ ընդունել առանց երկնքի նշանների տեսնելու, ներքին հաստատուն համոզմամբ միայն, որ պէտք է չխախտուի նաև այն ժամանակ, երբ շատ աւելի խոնարհ և անարդ վիճակի մէջ տեսնէք ինձ:— Եւ երբ գանուեցաւ մի աշակերտ, մի մահականացու, որ այդ բոլոր հարցերին «այո՛» պատասխանել կարող էր՝ ինչպիսի մխիթարութիւն, ինչ բերկրալի բոպէ Փրկչի համար. ձգուած էր այլևս Աստուծոյ արքայութեան այն փոքրիկ սերմը, որ ածելով մեծ ծառ պիտի դառնար և բոլոր ազգերին իւր ստուերի ներքոյ ժողովէր. աշխարհի մէջ մի մարդ կար, որի մաքուր և կենդանի հաւատն իրաւունք էր տալիս նորան այդ արքայութեան ժառանգ լինելու. և երբ մէկը կար՝ կլինէր նաև երկրորդը, երրորդը և այսպէս քար քարի վերայ շարուելով՝ Աստուծոյ տան մեծ շէնքը պէտք է կառուցուէր:

«Ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ». Հռովմէականներն իրաւունք ունին պընդելու, որ այս խօսքերն ուղղակի Պետրոսի իբրև անձնաւորութեան, համար են տասած, և ոչ նորա հաւասարի կամ մի ներքին հոգեկան կարողութեան, մի յատկութեան համար՝ ինչպէս մեկնում են Յունական և Բողոքական եկեղեցիների շատ ներկայացուցիչներ, Հռովմէ ձրգտումների դէմ պաշտպանուելիս: Հարց է սակայն, թէ ինչպիսի՞ անձնաւորութիւն է ներկայանում այստեղ Պետրոս. արդեօք իբրև մի իշխանաւոր, որ կոչուած էր Հռովմէ նուիրապետական աթոռի վերայ բազմելու, իւր ընկեր առաքեալների և բոլոր եկեղեցւոյ, բոլոր աշխարհի վերայ իշխելու՝ իշխելու այն աւետարանի՛ անունով, որի մէջ ասուած է. «Իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այնպէս իցէ և ի ձերում միջի»: Այդպէս լինել հարկաւ չէր կարող, ապա թէ ոչ ճշմարտութեան աւետարանը պէտք է հակասէր ինքն իրեն:— Ի նկատի ունենալու է նախ որ հայերէն թարգմանութեան մէջ մի փոքրիկ շեղումն կայ յունարէն բնագրից. այնտեղ տարբերութիւն է դրած «պետրոս» և «պետրա» խօսքերի մէջ. առաջինը հասարակ քար է նշանակուած, բայց գործ է ածուում նաև երկրորդի մտքով, որ նշա-

նակում է ժայռ: և այս դէպքում մէջ է բերուած իրրե յատուկ անուն: Եթէ Հայերէնը երկու դէպքում ևս վէմ բառն է գործ դնում գուցէ ասորերէն թարգմանութեան ազդեցութեամբ է: որը ինչպէս և նորա շատ մօտ ազգակից արամերէնը՝ Փրկչի խօսակցական լեզուն, տարբերութիւն չէ դնում երկու բառերի մէջ, այնպէս որ ինքը Փրկչը երկու տեղում ևս «կէֆա» արտասանած պէտք է լինի: Թամենայն դէպս Նա կամեցել է ասել. Զուր տեղը չէր, որ քո անունը Պետրոս դրի. քո այդ համարձակ խոստովանութեամբ դու ապացուցեցիր, որ արժանի ես այդ անունն. առաջին խոստովանողը եղար, ուստի և առաջին վէմը կլինես այն մեծ հաստատութեան, որ նոյնպիսի խոստովանողներին պէտք է կազմուի: Դժոխքը՝ մահուան թագաւորութիւնը, անսահման իշխանութիւն է գործ դրել մինչև այժմ՝ ամէնքի վերայ. ով միանգամ նորա դռներին անցել է՝ վերադառնալ կրկին չէ կարողացել. բայց իմ կանգնած հաստատութեան մէջ պատսպարան զանոգներն ազատ կլինին այդ բռնութիւնից, և դժոխքի դռները փակ մնալ, նոցա իրենց ետեւ պահել չեն կարողանայ.— ահա թէ ինչպիսի մեծ շնորհ է սպասում քեզ և քո նմաններին:

Արդ ինչով արժանացաւ Պետրոս այդ շնորհին և ինչպիսի տեղ է գրաւում նա եկեղեցւոյ շինուածի մէջ: Պարզ է, որ նորա բոլոր առաւելութիւնը, նորան վէմ՝ դարձնողը, իւր հաւատն է՝ այն հաստատուն համոզումը և այն համարձակ խոստովանութիւնը, թէ մի հասարակ մարդու պատկերով իւր առաջ կանգնած վարդապետը նոյն ինքն Բրիստոս է: խոստացեալ Մեսիան: Աստուծոյ Որդին. իսկ հաւատը երաշխաւորութիւն է ոչ թէ իշխանութեան և փառքի, այլ յաւիտենական կեանքի համար: Հարկաւ ոչ թէ, Պետրոսի հաւատը այլ ինքը Պետրոս իրրե հաւատացող ներկայացնում է այն վէմը, որի վերայ պէտք է հաստատուէր Եկեղեցին. բայց նախ Բրիստոսի խօսքերից պարզ երևում է, որ Նորա եկեղեցին մի նուիրապետական իշխանութիւն չէ՝ աշխարհին տիրելու կոչուած, այլ մի կրթարան, ուր մարդիկ մարդուում և պատրաստու-

ում են Երկնքի արքայութիւն և յաւիտենական կեանք ժառանգելու. ապա՝ այն վէմը, որի վերայ հաստատուում է Եկեղեցւոյ շէնքը, այդ շէնքի հիմքը կազմող վէմ չէ: «Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել, քան զեղեալն, որ է Եիսուս Բրիստոս» այլ հիմքի վերայ դրուած առաջին քարը, որի կողքին դրուում են միւս քարերը՝ նոյնչափ արժէք ունեցող հաստատութեան համար, և սերտ կապուած հիմքի հետ: բտ այնմ թէ որչափ զօրեղ է հաւատը դէպի Բրիստոս: Պետրոսին վէմ անուանելով և Երկնքի արքայութեան փականքը նորան տալով՝ շատ հեռու էր Բրիստոս այն մաքից, թէ իշխանութիւն է տալիս այդպիսով իւր Եկեղեցին կառավարելու. ակներև է այդ նորանից իսկ, որ մի քիչ յետոյ, երբ Պետրոս՝ գուցէ իրեն եղած խոստումներով շացած, վիճում էր Նորա հետ և աշխատում էր կանգնեցնել կամաւոր նահատակութիւն յանձն առնելու մտադրութիւնից, համոզելով երեւի միանգամայն, որ իւր մեծիական փառք և իշխանութեամբ յայտնուի— Եթէ յետոյ իմ ստանայ, զայթակղութիւն իմ ես, պատասխանեց:

Դիտել պէտք է նաև, որ Եկեղեցւոյ շինութիւնը Նա անմիջապէս չսկսեց, այլ տպառնի էր խօսում: ապաղայի համար. որպէս զի Պետրոս իսկական վէմ դառնար և շինութեան պիտանի լինէր, դեռ շատ ու շատ զայթակղեցուցիչ մտքերից պէտք է ազատուէր՝ դեռ շատ անգամ փորձութեանց պէտք է ենթարկուէր և կամոց կամաց զարգանար ու ամրապնդուէր այն հաւատը, որ այստեղ միայն իրրե մի կենսունակ բողբոջ էր ներկայանում: Եւ երբ այդ բողբոջը կրացուէր ու հասուն առատ պտու դներ կրերէր Երկնքի արքայութեան համար, այն ժամանակ Պետրոս մենակ կանգնած չէր լինի արքայութեան դրան առաջ, կապելու և արձակելու իշխանութիւն ձեռին. այլ նորա հետ կանգնած կլինէին նաև իւր տասնևմէկ ընկերները (համ: Մատթ. ԺԷ. 18. Թայտ. ԻԱ. 14), որոնք և կորոշէին թէ սվքեր երկրի վերայ իրենց աւանդած առաքելական վարդապետութեան հաւատարիմ աշակերտներ, կամ իրենց քարոզութեամբ հաստատուած Եկեղեցւոյ իսկա-

կան անդամներ են եղել որով իրաւունք պէտք է ստանային արքայութիւն մտնելու:—Այսպէս ուրեմն այն վէճը որի վերայ շինուած է Բրիտոսի Եկեղեցին՝ ոչ թէ Առաքելոց գլուխ և նուիրապետական անասման իշխանութեամբ օժտուած Պետրոսն է, այլ հաւատացող Պետրոսը և Եկեղեցւոյ հաստատութեան ու յարատե շինութեան և զարգացման պայման նորա երեակայական յաջորդների իշխանասիրական ձգտումները պահպանելը չէ՝ Հռոմի աթոռի վերայ, այլ նորա խոստովանած հաւատն անաղարտ և կենդանի պահելը՝ ի սփիւռս աշխարհի ցրուած ճշմարիտ քրիստոնեաների սրտերում:

Ամեն տեղ, ուր Բրիտոս ճշմարիտ հաստացողներ է գտել, այնտեղ և շինել է իւր Եկեղեցին, այնտեղ հաստատել է իւր երկնաւոր իշխանութեան աթոռը՝ Հօր հոգով և ճշմարտութեամբ երկրպագողներ, և ոչ աշխարհային փառաց կոյր զինուորներ՝ ժողովելու համար: Մի նոր Պետրոս՝ ոչ խօսքով միայն, այլ անպատում շարչարանքներով իւր անխախտելի հաւատը խոստովանող մի հաւատարիմ վկայ էր նաև մեր Մեծ Լուսաւորիչը: Հաւատով զօրացած նա իւր աղաչաւոր բազուկները դէպի երկինք կառկառեց, դէպի Բրիտոս՝ Աստուծոյ Որդին և եկաւ իջաւ Երկնաւոր Անմահ Ծարտարապետը, իւր առաքեալների արեամբ շղախուած գետնի վերայ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ լուսեղէն կամարները հաստատեց՝ հաստատեց առաքելական իշխանութեան այն Մայր Աթոռը, որի վերայ բազմոցները գիտակցել են միշտ թէ իրենք խոնարհ սպասաւորներ են միայն իսկական Աթոռակալի՝ Սորա փառքը որոնելու, Սորա խօսքը քարոզելու, Սորա հաւատը կենդանի պահելու կոչուած: Եւ որչափ աւելի կենդանի լինի այդ հաւատը հայ մարդոց սրտերում՝ նոյնչափ աւելի շէն կլինի և պայծառ Հայաստանեայց ս. Եկեղեցին, նոյնչափ աւելի մեծ Մայր Աթոռի փառքն ու հեղինակութիւնը: Լուսաւորչի լոյս հաւատն է այն, և ոչ որ և է արտաքին առաւելութիւն կամ զօրութիւն, որ մեր եկեղեցին պահպանել և զօրացնել, եկեղեցւոյ պաշտօնեաներին անձնուէր ոգևորութեամբ, եկեղեցւոյ զաւակներ-

րին մաքուր բարեպաշտութեամբ և հաւատարիմ սիրոյ զգացումներով լեցնել կարող է: Հաւատը դէպի Բրիտոս մի երկնային զօրութիւն է, որ մեզ կտրում է կրքերի և մարմնական ցանկութիւնների աշխարհից և բարոյական: Վսեմ գաղափարական երկնաւոր կեանքի ընդունակ դարձնում: Դժոխքի դռներից չյաղթահարուողներ Բրիտոսի այն ճշմարիտ հաւատացեալներն են, որոնք անցաւոր և ապականացու աշխարհի մէջ մի յաւիտենական և անապական ինչ ճանաչում են. գիտեն որ խիստ անշուք կերպարանքի ներքոյ է յայտնուում այդ յաւիտենականը, համբերութեամբ նեղութիւններ ու զրկանքներ տանելով միայն ձեռք բերուում: համոզուած են, որ երկինք և երկիր անցնել կարող են, բայց յանուն Բրիտոսի ճշմարիտ խոստովանութեամբ և առաքինական նահատակութեամբ ձեռք բերուած այդ երկնային բարիքն անցնել չէ կարող: Աստուծոյ Միածին Որդին այդպիսի հաւատացեալներ է պահանջում՝ իւր իշխանութիւնը երկրի վերայ հաստատ պահելու համար: հայ հաւատացեալներ՝ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռից յարատե իշխելու և իւր կենարար շնորհները սփռելու համար:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

ԵՒ

ԱՂ.ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ .

Գ .

ԱՂ.ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ .

Ի .

Ներքին առաւելութիւն և արտաքին առաւելութիւն Բարեբախտութիւն:

(Շ ա տ ու ն ա կ ու թ ի լ է) *

Անցեալ երկու գլուխներում փորձեցինք համառօտ նկարագրել, թէ ինչ կազմակերպութիւն էր ստացել աղքատների խնամատարութիւնը քրիստոնեական համայնքների և հաս-

* Տես «Արարես» 1897 թ. մայիս, յունիս եւ յուլիս ցիստիւսներ: